ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» հունվարի 2020 թվականի N 1

ՇԻՆՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ՀԱՏՎԱԾԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարան է դիմել քաղաքացի Սոնա Բագոյան Սուլախյանը՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող համայնքի Տիգրան Մեծ փողոցի թիվ 13 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված բնակելի տան և օժանդակ շինությունների օրինականացման խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ին N470-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում՝ որոշում եմ.

1. Օրինական ճանաչել քաղաքացի Սոնա Բագոյան Սուլախյանին պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Տիգրան Մեծ փողոցի թիվ 13 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված 345,18 քմ մակերեսով բնակելի տունը, 45,94 քմ մակերեսով ավտոտնակը, 20,31 քմ մակերեսով պահեստները և 15,4 քմ մակերեսով պարիսպը:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը կազմում է 827 760 դրամ /ութ հարյուր քսանյոթ հազար յոթ հարյուր վաթսուն/ դրամ:
3. Սույն որոշման ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:

4. Հողամասին՝ շինությունով, տալ հետևյալ հասցեն՝ ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Մուսալեռ, Տիգրան Մեծ փողոց, թիվ 13:
5. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Գ. ՍԱՅԱԴՅԱՆ
2020 թվական, հունվարի 14
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ. փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հունվարի 2020 թվականի N 2

ՀԱՍՑԵ-ՀԱՄԱՐԱՆԻՇԸ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Մուսալեռ համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 6-ի հերթական նիստի N 13 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գտնվող 04-069-0014-0080 ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի բաժանման հատակագծի առանձնացվող 0,0891 հա հատվածին տալ հետևյալ հասցեավորումը՝ Լուի Դարթիժ դյու Ֆուրնեի փողոց, թիվ 42, իսկ մյուս՝ 0.0901 հա հատվածի հասցեն թողնել նույնը՝ Լուի Դարթիժ դյու Ֆուրնեի փողոց, թիվ 40:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թվական, հունվարի 31
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» փետրվարի 2020 թվականի N 3

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարան է դիմել քաղաքացի Արմեն Ժորայի Բակումյանը՝ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Լ. Դ. դյու Ֆուրնեի փողոցի 4 հասցեում գտնվող՝ իրեն համասեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասում կառուցված բնակելի տան (հիմք՝ ԱՁ «ՄԱՉԱՆՅԱՆ ԿԱՐԵՆ» /իրավաբանական անձի պետական գրանցման համարը՝ 01Ա154167/ կողմից տրված չափագրություն) գույքային իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Լ. Դ. դյու Ֆուրնեի փողոցի 4 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասում կառուցված բնակելի տների, զուգարանների, ծածկի և պարիսպի նկատմամբ քաղաքացիներ Արմեն Ժորայի Բակումյանի /ծնված 02.04.1963թ./, Անահիտ Գեյիմի Բակումյանի /ծնված 07.12.1969թ./ և Սարգիս Արմենի Բակումյանի /ծնված 12.11.1990թ./ գույքային իրավունքները՝ վերականգնելով նրանց սեփականության իրավունքը մինչև 2001թ.

կառուցված բնակելի տների /108.9քմ/, զուգարանների /5.8քմ/, ծածկի /31.5քմ/ և պարիսպի /5.3քմ/ նկատմամբ:

Բնակելի տները, զուգարանները, ծածկը և պարիսպը բավարարում են «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները: Հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում: Կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերի, չեն առաջացնում սերվիտուտ:

2. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Արմեն Ժորայի Բակումյանի, Անահիտ Գեյիմի Բակումյանի և Սարգիս Արմենի Բակումյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասում առկա բնակելի տների, զուգարանների, ծածկի և պարիսպի նկատմամբ՝ տրամադրելով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
3. Բնակելի տանը տրամադրել Լուի Դարթիժ դյու Ֆուրնեի փողոց, թիվ 4 հասցեն:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվական,փետրվարի 1

գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47 22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«8» հունվարի 2020 թվականի N 1

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 142-րդ հոդվածի առաջին մասով, Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման նախարարի 19.01.2009թ. N 03-Ն հրամանով՝ *կարգադրում եմ.*

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի և աշխատակիցների 2020 թվականի ամենամյա արձակուրդից օգտվելու ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Գ. ՍԱՅԱԴՅԱՆ
2020 թվական, հունվարի 8
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«8» հունվարի 2020 թվականի N 2

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԵԿՆԱԾ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի «է» ենթակետով՝ *կարգադրում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի գործուղման մեկնած աշխատակիցների 2020 թվականի բյուջետային տարվա ընթացքում կատարած գործուղման ծախսերը փոխհատուցել համաձայն ներկայացված գործուղման վկայականների:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի առաջատար մասնագետին (Լուսինե Ալեքսանյան) սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Գ. ՍԱՅԱԴՅԱՆ
2020 թվական, հունվարի 8
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«13» հունվարի 2020 թվականի N 3

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողություն իրականացնելու նպատակով՝ կարգադրում եմ.

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ (Գոհար Սայադյան) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում գործող առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում յուրաքանչյուր կիսամյակի համար ստուգումների իրականացնել և մինչև տվյալ կիսամյակը հաջորդող ամսվա 5-ը ստուգումների արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:
3. Տնտեսվարող սուբյեկտի մոտ հսկողության ժամկետ սահմանել ոչ ավել, քան մեկ օրը:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Գ. ՍԱՅԱԴՅԱՆ
2020 թվական, հունվարի 13
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շաղ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«22» հունվարի 2020 թվականի N4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածով, 167-րդ հոդվածի երրորդ մասով, 169-րդ հոդվածի երրորդ մասով, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզպետի 08.01.2020թ. N02/16/00017-2020 գրությամբ ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման հայտի ներկայացման վերջնաժամկետը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավար Էդգար Հովհաննիսյանի 2020 թվականի հունվարի 22-ի համաձայնությունը՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավար Էդգար Հովհաննիսյանին 2020 թվականի հունվարի 23-ից հետո կանչել 2019 թվականի իր ամենամյա արձակուրդից:
2. Էդգար Հովհաննիսյանի 2019 թվականի ամենամյա արձակուրդի չօգտագործված 12 աշխատանքային օրերը տրամադրել 2020 թվականի ընթացքում:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Գ. ՍԱՅԱԴՅԱՆ
2020 թվական, հունվարի 22
գ. Մուսալեռ